



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20810

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ



Առ ժողովուրդն



Եղիազար Մոսիսեան



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1880

243  
196

373  
J. 96

ՊԱՐՄԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ



Առ ժողովուրդն



ԵԳԻՉՈՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1880

2010

1880



833/ ւե

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ



Աստի իբր երեք շաբաթ առաջ օր մը Հայրենիքի խմբագիր Պ. Մկրտիչ Մեկիքեան մասնաւորապէս ինդրեց ինէ որ իւր լրագրին երբեմն յօդուածներ գրեմ: Հաւանեցայ: Քանի մ'օր յետոյ ըսի որ Օտեանի՝ Ռուսինեան փիլիսոփայութեան վրայ գրած յառաջաբանը պիտի քննադատեմ, կը հրատարակէն. «յո՛», պատասխանեց, «մեայն սերով: Գրեցի, տարի իրեն կարդացի. ապա հարցուցի, գործիդ կուգայ. «յո՛», ըսաւ, եւ սունելով ձեռագիրս անմիջապէս գրաշարին տուաւ:

Երկու օր վերջ վիճարանութիւն մ'ունեցայ կործանած օճախի վարպետին հետ՝ սա նիւթին վրայ թէ, «Սահմանադրութիւնն մեզ օգուս չըրաւ քսան տարիէ ի վեր, ընդհակառակն կարգ մը վատերու ձեռք գործիք եղաւ ամէն ազտոտութիւն օրինաց պատրուակաւ գործելու: Եւ կը պնդէի. — Քանի որ ժողովուրդն այսօր այնպիսի պատրիարք մ'ունի, որոյ վրայ լիուրի վստահ է, եւ ոչ միայն Սահմանադրութիւնն առ ժամանակեաց կերպիւ դադրեցընելու այլ եւ իւր անձն նմա զօհելու պատրաստ է, թողունք, որ այս ՄԱՐԴՆ ազատօրէն գործէ գոնէ մինչեւ ժամանակ մը. — միով բանիւ կը պահանջէի որ շէկոսորոնթեան տրուի ներսէս Պատրիարքի, որպէս զի էր համառ ճարտերով և կերպով աշխարհի օրնէն որ ներկայ պարագաները պարզուն: Ինձ համակարծիք եղան Մեծ. Յ. Պարոնեան, Լուսոյ նախկին խմբագիրն եւ Գեր. Վահան վարդապետ Մինասեան, որք մասնակից էին վիճարանութեան: Գեր.

2009



(65633-67)

605-40



Վահան վարդապետն յարեց թէ առաջարկութեան ձեռով պիտի պաշտպանեմ այս կարծիքը ազգային ժողովոյ առաջիկայ նստին մէջ»:

Նախկին օճախապետն սաստիկ նեղ մնաց. սակայն իւր վրէժն ուրիշ կերպով առնուլ փորձեց. վասն զի երկու օր յետոյ զիս տեսնելով ի Ղալաթիա, ըսաւ որ «Հայրենիքի խմբագիրն յօդուածիդ մնացորդն պիտի չդնէ եթէ չփոխես»:— Ի՞նչ, փոխել յօդուած մը՝ զոր ինքն կարդացեր, հաւնէր, եւ որոյ կէսը հրատարակեր է, այսպիսի յօդուած մը փոխել. ի՞նչ կը նշանակէ այս. ո՞ր խմբագիր, ո՞ր երկու տող բան գրելու, հասկնալու կարող, պատուոյ զգացում կրող մարդ այս նուաստութեան կը զիջանի:

Ասկից կը հասկցուի որ Հայրենիքի խմբագիրն առ ինքն ուղղեալ յօդուածներն կանխաւ կարդալ կուտայ օճախին եւ այսպէս իւր եւ թերթին բարոյականն օճախին տրամադրութեան տակ դրած լինելով՝ կ'ուզէ որ իւր յօդուածագրերն եւս նորա շահուն ծառայեցնէ:

Եւ յիրաւի՝ երբ վիրաւորեալ արժանապատուութեան մը թելադրած իրաւացի յուզմամբ գնացի խմբագրէն բացատրութիւն ուղեւու, յայտարարեց որ չեմ հրատարակեր մնացորդը. Հասկըցայ: Արհամարհեցի զինքն իւր ցածութեան մէջ եւ սա չափ ըսի. «Կենդանիք կան որ զարջութեամբ կ'ապրին, դու օճախէն կ'ապրիս. տուր սա ձեռագիրս»:

Ահա այս պատճառաւ եւ բազմաթիւ բարեկամաց թախանձանօք ստիպուեցայ զատ տետրակով հրատարակել Պարսկական Նամականի այս չորրորդն:

Ե. Մ.

# Պարսկական Նամականի



## ԱՌ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

ՕՏԵԱՆԻ՝ ՌՈՒՍԻՆԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԳՐԱԾ  
ՅԱՌԱՋԱԲԱՆԸ.— ՄԱՆԿԱՎԱՐԹՆԵՐՈՒՆ ԴԵՐՆ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՄԷՋ ԵՒ  
ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐՔԱՐԱՆ



Եթէ պատմութիւնն ազգերու կենաց նկարագիրն եւ պատկերն է, քննադատութիւնն այս պատկերին ամենանուրբ լաւութիւններն եւ յոռութիւններն ցուցնող մտգական լրագրերն է:

Այս շարթու մատենիկ մ'անցաւ ձեռքս՝ որոյ յառաջաբանն ազգին ամենէն նշանաւոր գրագէտ - քաղաքագէտին գրչէն ելած է, անոր՝ որ թէ մեր ազգային տեսակէտով եւ թէ համազգային նկատմամբ մեծ կշիռ ունի Արեւելից մէջ յաջ օտարաց եւ իբր այն՝ աւելի լուրջ նկատողութեան արժանի իւր մէն մի բառն. — մեծ ճշմարտութիւնք ինչպէս մեծ նախապաշարմունք երեւելի մարդոց ձեռօք աւելի կ'արմատանան:

Օտեան էֆէնտին շուրջ երեսուն երկու տարիներու պատմութիւնն առած ազգին կը ներկայանայ, եւ իւր ու ընկերաց ի նպաստ ազգին կատարած



գործերն ի ձեռին՝ հասարակաց ատեանն կանգնած նորա քննադատութիւնն կը պահանջէ . ջանամ ուրեմն իւր մեծ հանձարին իմ սքանչացումն եւ ինձ նկատմամբ ունեցած համարմանն իմ երախտագրատութիւնս յայտնելով հանդերձ՝ անողոք ճշմարտութեան փորձաքարն ի ձեռին մատչիլ իւր փայլուն խօսքերուն եւ նոցա բուն արժէքն ցուցնել քեզ, ո՛վ ժողովուրդ, քեզ՝ որում ճշմարտութիւնն իւր բոլոր մերկութեամբն ուսուցանելու համար այնքան հալածուած, կենօք չափ վիասուած՝ եւ այսօր դարձեալ երբէք չեմ գըջացած եւ գոհ եմ:

Արդ, Օտեան էֆէնտին Գաղտոյ 48 ի յեղափոխութեան մեծ սկզբանց գլխակ սիրահար ցուցնելով զՊալեան եւ Ռուսինեանն, մոնաւանդ այս վերջինն մասնակից իսկ այս յեղափոխութեան՝ նոցա հետ բարեկամութեամբ կապուելը կը պատմէ եւ կը յարէ . «Այն ատեն՝ ազգն վարչութեան պէս բան մ'ունէր, լեզուի պէս բան մը, ու դպրոցի պէս բան մը: Սոքա ձեռն արկին կերպարանել այս երեք բաները, որք երեք էական սրայմաններն են ազգային յառաջադիմութեան: Այս ձեռնարկութենէն ծնան Սահմանադրութիւնը, ուղղախօսութիւնը եւ 1854 ի Ուսումնական խորհուրդը, ոչինչ աւելի երկունք, սքնութիւն եւ գոհօղութիւն պատճառած է իր հեղինակաց քան Սահմանադրութիւնը» (ուղղախօսութիւնն աւել կ'ուզէ): Եւ քանի մը տող յետոյ՝ այս երեք բաներուն համար իրենց տարած ջանից իրր արդիւնք կը հուշակէ՝ ազգային դատարարակութեան արդի վիճակն, տասն տարիէ ի վեր դպրոցներէն դուրս զեզուլ երիտասարդութիւնն եւ լեզուի բարեկարգութեան խանդը:

Ահա այս է Օտեան էֆէնտիի՝ իւր կենաց ամենէն առոյգ, հանձարեղ, եռանդնալից շրջանին մէջ իւր մեծ բարեկամացն, Պալեանի, Ռուսինեանի, Պարտիզպանեանի եւ այլոց հետ կատարած ազգային գործերուն բովանդակութիւնը:

Տեսնենք ուրեմն:

Երբ 1848ին Գաղիական ահաւոր յեղափոխութեան, Կիզոյի, Թիէուի, Քուզէնի մեծ գործոց հանդիսատես Ռուսինեան, Պալեան ի Պօլիս գալով Պօլսոյ Հայոց այն ժամանակին ուսումնական ժողովատեղին կամ այսպէս ըսենք՝ Ալադեֆա համարուող Պօլոս աղա Օտեան՝ մեծանուն եւ մեծազօգի մարդուն տունը կը ժողովին՝ այնպիսի ատեն մի յորում Արեւելք գրեթէ կը մրափէր՝ եւ առաջին անգամ զայն արթնցնող՝ նմա ցունց տուող ժողովուրդն նորա ապագային եթէ ոչ տէրն գոնէ ամենէն մեծ դերասանն պիտի լինէր՝ այսպիսի ժամանակ մը կըսեմք, մեր երեւելի մարդիկ Ռուսինեան, Օտեան, Պալեան, Պարտիզպանեան ի՛նչ կ'ընէին . — սղղախօսութիւնն կը շինէին՝ զոր իրենք իսկ մերժեցին սպա իրրեւ իրենց հանձարին անարժան վիժած մը՝ եւ որուն դամբանականը սցժմ կը կարգայ Օտեան էֆէնտին, «Եւ մենք դեռ չգիտէինք այն ատեն երբ լեզու մը շինելու ելեր էինք՝ այն ազգին որ զգրաբառն իրեն լեզու ունեցած էր, չգիտէինք թէ ինչ է ձանձրութիւն որ միօրինակութենէն եւ միաձեւութենէն յառաջ կու գայ, եւ բանաւորութեան խիստ աստուածին կը գոհէինք զեղեցիկութիւնն ու մեծութիւնն»:

Բանաւոր ըսել այնմ՝ որ հիւսիսէն է՝ սո-



փետտութիւն է՝ ղէ Բն և գեղեցիկն է Բանասոր: Բայց ընդունիմք սոհ մը թէ Օտեանի եւ ընկերաց հետեւած ընթացքը բանասոր էր՝ սակայն օգտակար եւ գեղեցիկ, մեծ չէր: Սմա այնքան լաւ համոզուած է Օտեան էֆէնտին՝ որ ինքնին իւր բերնով կ'արձակէ իրենց լեզուարանական վերանորոգութեան համար ըրած անբնական ջանից դատապարտութիւնն, ըսելով՝ «Ազգին լեզուն չգիտէինք եւ նմա լեզու չէինք ելէր էլն»: Աստի կ'իմացուի որ լեզուի մասին իրենց ըրած փորձն աղարկած եւ կարեմք ըսել մասամբ իւրք միասակար իսկ եղած է, զի սարբերարար նոցա շաւղին հետեւող անփորձ պատանեկաց ազատ դուռ բացած է:

Ո՞վ ուրեմն մեր արդի լեզուին քիչ շատ մաքրութեան, յտակութեան եւ ներդաշնակութեան էրբեք եւ սիզնարարածու եղած եւ մեծ մասամբ այնմ նպատած է անձամբ. — Կ. Ս. իւթիւճեան: Այս անձն որ քառորդ դարէ ի վեր իւր Մասն լեզու, Թափառակունի, Սելիօ Բէլլիօի Բանդ Իֆիթարգմանութիւններովը, ազգային մատենագրութեան հրատարակին վրայ իրր մեծ արձան կանգնած է՝ դրարառի եւ արդի լեզուի մէջ, այս մարդն որոյ Թափառակունի եւ Սիլվիօ Բէլլիօի սքանչելի աշխարհիկ լեզուն տակաւին երկար ժամանակ եւ կարեմք ըսել թէ միշտ իրր նախագաղափար պիտի ծառայէ ազգային արդի լեզուին մշակութեան դործին մէջ, այս մարդն եւ իւր դարոցն կըսեմք, երբէք նշանակեցիւ չափ հետեւած չեն Ուղղախօսութեան աղճատ, ոչ հայերէն եւ Բարբարոս լեզուին: Ահա արդի լեզուին նորոգիչն եւ ոչ 1854 ի Ուսումնական փորհրդին երկասիրած Ուղղախօսութիւնն. զի

նորա հեղինակաց ամենէն երեւելին՝ Օտեան՝ կը խոստովանի թէ իրենք չգիտէին հայ լեզուին ոգին: Զարմանալի բան, լեզու չգիտել՝ եւ լեզու շինելու ելնել եւ ապա ըսել թէ արդի լեզուն նմա հետեւողութեամբ կը նորոգի. չէն չէն լաւ չէն յաւաներ:

Գրաւոր եւ աշխարհիկ լեզուներն իրարմէ որչորչ ճիշդ ժամանակաթիւն յայտնի չէ եւ ոչ մի ազգի մէջ, եւ հիմա գիտութիւնն ասպցուցած է որ սոքա գրեթէ ժամանակակից են ամէն տեղ. այսպէս Ֆարսին՝ Զենտին, Բրաքքիդ, Բալին՝ Սանսկրիտին եւ կարեմք ըսել մեր աշխարհիկն՝ գրաբարին: Այո՛, սոքա ժամանակակից են, եւ կրթութեան տակաւ սա տակաւ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ տարածումն, գրագիտաց մանակի ջանքերուն հաւաքական զօրութիւն, եւ ոչ մի գրագրի յախումն գործը կը կոկեն լեզուներն եւ իրարու կը յաջորդեցնեն՝ երբ նոքա հիմնան ժամանակին հարուածէն: Այս ճըջմարտութիւնն խոստովանած է նաեւ Օտեան իւր յառաջաբանին մէջ:

Արդ վերոյգրեալ տողերէն յայտնի տեսուեցաւ 1854 ի Ուսումնական փորհրդին արդիւնքն. Սկսինք Օտեանի եւ ընկերաց ցտեղծած վարչութեան եւ Սահմանադրութեան օգուաններն թուել:

Մինչ իրիմի ահաւոր պատերազմն բոլոր Եւրոպա եւ արեւելք ցնցեց, ազգութեանց ոգին արթնցուց ընկճեալ ժողովրդաց մէջ, Պուլկարն հարիւրաւոր տղաք ի Ռուսիա եւ Եւրոպայի ուրիշ երկիրներ զրկելով՝ ապէս Պաֆլուցիոյ ծնունդ տուող վարձպետներ կը հասցընէր, Գարատաղցին հրացան յուս իւր լերանց կրթնած՝ դէպի Փոսկորիցա եւ Անթի-



վարի կը հայէր, Յոյն իւր ասպազայ մեծութեան յատակազիծն կը ծրագրէր, մինչ այս մենէ շատ սակաւաթիւ ազգեր էրենց կենաց էական դայմաններ կը խորհէին՝ Օտեան եւ ընկերք, ազգին ամենէն լաւ խորհող մարդիկ ինչ կ'ընէին. — Սահմանադրութիւն կը հեղինակէին որ՝ Կանոնադրութիւնն է՝ որ այնքան զանազանեանց եւ քանակեանց որքանք է եւ զոր՝ առաջ, Բարձր զանեցալ տեսնել Պալեան. այսպէս աւելնով կը խօսի Օտեան էֆէնտի Սահմանադրութեան վրայ:

Տեսնենք՝ արդ, թէ Սահմանադրութիւնն ինչ օգուտ ըրաւ, եւ օգուտն՝ եթէ ունի՝ Օտեանի պէս մեծ մարդու մը հրապարակաւ պարծանաց առիթ լինելու արժանի՞ բան է:

Սահմանադրութիւնն Վանօրէից Խորհուրդ հաստատած է, նմա յանձնած է վանքերու բարեկարգութեան մեծ պաշտօնն: Արդ, ո՞ր վանք բարեկարգուած է քսան տարիէ ի վեր, քանի՞ դպրոցներ բացուած են այս ստուգիւ արայական հարստութիւն ունեցող շէնքերուն մէջ. ինչպէս, ո՞ր կը վատնուին սոցա հարստութիւններն: Ինչ օգուտ ունին այսօր մեզ. ես թուեմ. —

Երուսաղէմ՝ երեսուն հազար սոկիի ահազին պարտք ունի, առանց կանոնաւոր վարձարանի:

Մշոյ Ս. Կարապետի վանք երսուն հազար սոկիի կողպուտ տուած է Կրեւերու, երկու երեք հազար սոկիի պարտուց տակ ընկճած՝ առանց դպրոցի:

Վարազայ վանք վաղամեծիկ դպրոցով քանի մը հազար սոկի ազգէն կորցած է:

Մշոյ, Սեբաստիոյ, Վանայ, Կեսարիոյ իւրաքանչիւր վանք մէն մի արեղայի, եպիսկոպոսի, կեռի:

եւ խոսվութեան եւ զարչութեանց որջ դարձած:

Սահմանադրութիւնն պարտաւորած է առաջնորդներն իրենց թեմական ժողովրդին կրթութեանն հոգ տանիլ, եւ առաջնորդներուն մեծ մասն ազէտ են՝ մայրենի լեզու չգիտելու շափ, զօջաքաղ, ըմբոստ՝ ազգին իրաւունքներն բռնարարելու, նորա կալուածներն վաճառելու (Մեսրոպ եպիսկոպոսն կեցած է), Պատրիարքարանի իշխանութիւնն յընչաց քերելու՝ եւ ամբողջ ազգին մօրուքին խնդալու շափ խրոխտ. այս է Օտեանի սահմանադրական վարչութիւնն:

Սահմանադրութիւնն Ուսումնական խորհուրդ ստեղծած է՝ եւ քսան տարիէ ի վեր մեր վարժարաններն ծրագիր մը չեն ունեցած, եթէ ունեցած են ըսուի, չեն դործադրած՝ եթէ չեն դործադրած՝ պատճառն է որ զօրաւոր իշխանութեան չեն պատահած: Ամէն թաղ իւր անձնասիրութիւնն, ամէն դասատու իւր քրմահաճութիւնն օրէնք առած կ'երթան:

Այսօր ամէն թաղի մէջ հինգ, տասն տուներ կը տեսնուին՝ որ իրենց ճակատն մէյմէկ տախտակ են կախած մասնաւոր վարժարան երկու տիտղոսով, եւ չկայ հարցնող, փնտոող թէ այդ շէնքերուն մէջ ո՞վ է ուսուցիչ, ո՞վ է անօրէն, սահիբչութեան, թէ ձիադարմանութեան է դարձած: (ապացոյցն ունիմ):

Ամէն կողմ անիշխանութիւն, ամէն կողմ անկանոնութիւն:

Սահմանադրութիւնն՝ Կանոնադրութիւնն է Վերջին օրէնք է եղեր. ո՞ր ազգին — անոր՝ որու հայրենիքն ծայրէ ի ծայր անգթութեան զոհերու սեւա շիրիմ է:



դարձած, անոր որ կարողալ, գրեւ չգիտէ, քրդէն կապտակուի անմուռնչ, չհրքէզէն կը բռնաբարուի անպատիժ, լազէն կոտնհարի անխնայ՝ եւ Սահմանադրութիւնն առի:

Այո, սահմանադրութիւնն ունի:

Բայց ամէն հարիւր մի թնդանօթ որ Սահմանադրութեան մը հաստատութիւնն կիմացնեն, այդ ազգին վերածնունդն չեն աւետեր, երբեմն նորա յուղարկաւորութեան մահաշուկ դազաղին են սղդարար. — 1877 !!!:

Սահմանադրութիւն խմբագրելն դիւրին է. այսօր մեր վարժարաններէն ելնող տղայք մինչեւ իրիկուն մէյմէկ սահմանադրութիւն կարեն խմբագրել: Խնդիրը զայն գործադրելի ընելն է: Օրէնքն այն ժամանակ պիտանի կը լինի՝ երբ բարուց մէջ կ'անցնի, կամ բարքն այն ժամանակ կ'ընդունին օրէնք՝ երբ յայն պատրաստուած են: Արդ մեր մեծահանճար մարդիկ ի՞նչ ըրին: — Կտոր մը թուղթ սեւեցին եւ ազգին երեսին նետեցին. «Գնա՛, առ զայս եւ խաղա՛, ասով՝ մինչեւ որ քենէ յետնեալ ժողովուրդներն դան, անցնին եւ սպա դու նոցա ետեւէն վազէ հեւարով: Եւ յիրաւի այսպէս եղաւ: Այս մարդիկ ազգն չպատրաստեցին մինչ առիթ կար. օձին գլուխն նորաքնացած ժամանակն պէտք էր ջախջախել՝ այժմ շատ ուշ է: Եւ ինչո՞ւ այսպէս չըրին, շուղեցին՝ թէ չգիտցան, ես չեմ կարող ասոնցմէ մին կամ միւսն վճռել, սակայն հաստատապէս կարեմ ըսել թէ արդէ ընկեր-թիւններն հիմնող երեսակներն քործակա՛ն հանճարն ըսնէին այդ ժարդի: Ենչեք այլն երեւ լծեցին, ինչպէս կ'ըսէ Գաղիական առածը:

Այո՛, չջանացին ժողովուրդին բարձր տալ, եւ այս ողորմելի ազգն շուարած, խելացնոր ամէն նոր եւ կողին կը պնու՛՛՛ ձեռուըները կապած կապատէ օր մը պէյի մը, միւս օր էֆէնտիի մը, երբեմն եպիսկոպոսի մը եւ այլն:

Այսօր ազգ մեծ մարդ մ'ունի Պատրիարք, Ամենապատիւ Ներսէս Վարժապետեան. ստուգիւ մեծ իբր գրագէտ, մեծ եւ իբր հայրենասէր եւ մարդասէր՝ եւ սակայն թող լինի այն մեծ իբր վաճինկթըն՝ զոր աստուածային Պայրն՝ Տարոս ափնալան, աւազին, վերջին, փափ կոչած է՝ թող մեր այս Պատրիարքն լինի մեծ սորա չափ՝ եւ սակայն դարձեալ մեծ գործ չէ կարող տեսնել՝ երբ ժողովուրդն չէ պատրաստուած: Մեծ մարդ մը երբեմն ազգ մը կը վրկէ՝ սակայն այնպիսի ազգ՝ որ զայդ չսպասեր մէկ անձէ՝ այլ ինքն իւր կարողութեան վրայ կը յենու, այո՛, այն ժամանակ նմա չեն պակսիր մեծ մարդիկ: Ազգաց պատմութիւնն սորա անթիւ օրինակներն կը ցուցնէ մեզ:

Այսօր ամէն ոք ազգին մէջ այս մեծ անձին՝ պատրիարքին է յառած՝ եթէ յաջողի պիտի պաշտեն զինքն, իսկ եթէ ոչ՝ պիտի քարկոծեն. եւ ի՞նչ իրաւամբ: Ո՛ւր էր խելքերնիս մինչեւ ցարդ, ինչո՞ւ քնացանք եւ բժժալից աչերնիս հիւսա բացեր ու խողտեցուցիչ լուսին չեմք կարող նայիլ:

Դեռ ինն տարի առաջ՝ կը յիշեմ որ սահմանադրութեան տարեդարձի առթիւ գրած մէկ երգիս համար յանդիմանուեցայ բարձրաստիճան ազգայինէ մը, Օտեան էֆէնտիի մի գործակիցէն՝ իբր անխնայ. զի այն երգին նաքարաթն էր.



«Իմ տաճարներս սէրն կը կանգնէ ,  
«Իմ նախատինքս արիւնն սրբէ» :

Եւ սակայն աղբին այսօրեայ փոքր ինչ արթնու-  
թեան պատճառն անխոհեմ վարժապետներն , երի-  
տասարդներն եղած են . թէ եւ կարի սակաւաթիւ  
են նոքա մեր պէտքերուն համեմատութեամբ :

Դարձեալ կը հարցնեմ . ի՞նչ ըրաւ սահմանադրու-  
թիւն . եկեղեցիներու փոխակերպութեան վերցուց , քուէ  
գրե՞լ սովրեցուց ժողովուրդին : Եթէ ասոնք են իւր  
օգուտներն՝ ոչինչ են :

Այո՛ , այս աննշան արդիւնքներ տուաւ , բայց  
միանգամայն կարող պատրիարքաց , մարդոց ձեռք  
ոտքն կապեց , անօգուտ բանակիւններու , խորհր-  
դարանական իմաստակութեանց , շարժաղբու-  
թեանց լայն արձակ ասպարէզ բացաւ . մարդիկ  
յարոյց՝ որ ազգն կսպաննեն այսօր եւ սահմանա-  
դրութեան մէկ թեւէն չեն անցնիր . չգիտեն ողորմե-  
լիներն որ բոլոր ազգաց մեծագոյնն Անգլիա եր-  
բեմն իւր ամենէն նուիրական իրաւունքներն , ար-  
տօնութիւններն , իւր Մէծ Ծառին սկզբունքներն  
քնացուցած կամ զոհած է առժամեայ կերպիւ իւր  
վեհապետին՝ երբ վտանգի ճգնաժամ է եկած : Եւ  
մեր երեսփոխան էֆէնտիներն այսօր երեսփոխա-  
նական ճառախօսութեան կրթութիւն կ'ընեն՝ երբ  
ասղին ազգն կը մեռնի՝ երբ այսօր հաւուր քործ եւ  
ուր քործ պէտք է :

Գանք այժմ Օտեան եւ զնկերաց կատարած եր-  
րորդ յեղափոխութեան՝ այն է որպէս ինդոյն՝ որ  
բաց իս եւ բաց վսեմ . Օտեանի ամենէն կարեւորն է :

Աստ տխուր ճշմարտութիւններ պիտի յայտնեմ՝  
որք խստագոյն պիտի թուին ոմանց քան զորս մին-  
չեւ ցայս վայր յայտնեցի :

Երեսուն երկու տարի յառաջ Օտեան եւ ընկերք  
դպրոցի բարեկարգութեան էն շեշտաբար եղեր : Բայց  
նէր է իրենց ծրագիրն , նէր իրենց դպրոցն , քանի՞  
աշակերտ հասուցին , ի՞նչ ազդեցութիւն ունեցան  
իրենց յատակագծերն (եթէ կային) ներկայ վար-  
ժարանաց ուղղութեան վրայ :

Օտեան էֆէնտի կ'ըսէ . 1854 ին դպրոցի բարե-  
կարգութեան հիմն դրինք՝ եւ 1859—60 ին արդի  
Գէորդ Դ . ագտեր , ստանձաւեր , քործաւոր կաթո-  
ղիկուն՝ որ յայնժամ պատրիարք էր՝ եկաւ եէտի-  
զուէլի Ս . Փրկչի ազգային վարժարանն փակել ,  
աշակերտներն վտարել՝ որոց մէջ էի եւ ես : Ուրիշ  
անգամ մը ազգին մէկ երկու բարձրատիճան բժիշկ-  
ներն՝ քսու անբարոյականի մը զրպարտութեանն  
անսպառով առանց կանխաւ լուրջ քննութեան եւ  
հարցափորձի եկան դարձեալ ի նոյն վարժարանն եւ  
տասն տասներկու տարեկան տղոց առականքն ու  
ամօթոյքն բացին զննեցին , երկու հարէր անմեղ  
տղեկներու :

Եւ այն ժամանակ Փրկչի վարժարանն միակ բա-  
րեկարգ վարժարանն էր Պօլսոյ , եւ այն անձինքն  
վսեմ . Օտեանի խորհրդակիցքն , մտերիմքն էին  
եւ են :

Այս էր իրենց դպրոցական դարազլխու սկզբնա-  
ւորութիւնն : Եւ այսօր այն հալածեալ աշակերտ-  
ներէն բաւական ստուար խումբ մը ազգին կը ծա-  
ւայէ տաղանդով , զբամով , աշխատութեամբ : Կը  
հարցնեմք , նէր էին 54 ի ստանձաւան շեշտաբար վար-



ժարաններն երբ երեք տարի առաջ ազգային երեք մեծ ընկերութիւնք Հայաստանի մէջ դպրոցներ չէին բացած, երբ ազգին ստուգիւ բարերարներն հանդիսացող, նորա բարեոյն ճշմարիտ նահատակներն Մեզպուրեան, Պէրպէրեան, Գուրգէն, Սուրէնեան, Սուրատեան իրենց կենաց, պատուոյ, ընչից վտանգով վարժարաններ չէին կանգնած՝ որոնցմէ խոփե խոփե երկրասարքներ ելան եւ տակաւին կեղնեն: Պիտի ըսուի մեզ թէ՛ այդ անձինք միթէ ազգային վարժարաններուն արդիւնքն չեն. կը պատասխանեմք. այո՛, բայց ոչ այնչափ որպէս զի ազգն սոցա վրայ կատարեալ դաստիարակութեան իրաւունք ստացած լինի. սոցա մի մասն խաներու անկիւններ ծնգած աշխատեք են, այլք իրենց տասն եւ վեց տարեկան հասակին ծաղիկն են խամրած վարժապետութեան դասնաճաշէ հացը վաստկելով սնանելու եւ յառաջ երթալու համար (Պէրպէրեան), եւ ոմանք աղօտ կանթեղի լուսին առջեւ, կարօտութեան աղի արտասուքով իրենց գրքերն են թրջած՝ եւ այսպէս ուսած են:

Օ՛ֆ, եթէ Օտեան եւ ընկերք փոխանակ ցնորքներով ազգն օրօրելու երկու, մէկ հատ կանոնաւոր վարժարան հիմնէին, իւրաքանչիւր դաւառէ երկերկու հատ տղայ բերէին անդ եւ կրթէին, ստուգիւ Քէ, իրական բարիք պիտի ընէին ազգին եւ այսօր իրենք եթէ չսլարծէին իսկ՝ ազգն պիտի փառաւորէր զիրենք:

Ո՛չ, 1854ի ուսումնական խորհուրդն բաժին չունի ազգին վարժարանաց քիչ շատ շարժման գործոյն մէջ. եթէ նշանակութեան արժանի բան կայ այն վարժապետաց է բաժին:

Շահնագարեան մը վարժարան բանալու համար ահագին Քէ անուս ճշ, Նուպար փաշայի կը կրթնի, որ նորա յարատեւութիւնն երաշխաւորէ, եւ վարժարանն կը կործանի՝ ու Նուպար փաշա անտարբեր կը մնայ:

Մեզպուրեան՝ երիտասարդութեան մէջ իւր ժողոված իւր զաւակաց օրապահիկին զինն մէջտեղ կը դնէ վարժարան կը բանայ, կը վնասէ՝ դարձեալ կը յարատեւէ եւ իւր զաւակներուն հացի պատասն ազգին տղոց կը կերցնէ: Ռեթէոս Պէրպէրեան աղքատ Սափրիչի զաւակ, իւր հանձարին կրթնած վարժարան կը բանայ, վարժարան՝ որ Շահնագարեաններու տիպար լինելու է արժանի եւ չորս տարիէ ի վեր կը շարունակէ. ո՞վ է Քէ:

Սահմանադրական ուսումնական խորհուրդը չէ յաջողած քսան տարիէ ի վեր ազգային գոնէ մէկ վարժարանին ուղղութիւն տալ գործնական եղանակաւ. եւ Ռեթէոս Պէրպէրեան արդի մանկավարժական կատարելագործեալ դրութեամբ Քէ հասարակութեան ճշ կը վարէ:

Արդ, ո՞վ է մեծ. Բուեալ տասն՝ թէ գործնական հանձարն:

Այո՛, եթէ օր մ'այս ազգն բան մը պիտի լինի այն իւր հալածեալ, ճնշուած, կրօք դասին, իւր վարժապետներուն պիտի պնտրտի. եւ ոչ 1854ի ուսումնական խորհրդին: Նոցա պիտի պարտի իւր հարստահարեալ ազգին կորացած ճակտին բարձրացումն, ինչպէս մեծն Մոլթիքէ Գաղիոյ վրայ Գերմանիոյ տարած յաղթութիւնն Գերմանացի գիւղական վարժապետաց կ'ընծայէր: Մինչեւ որ ազգն այսպէս չճանչէ եւ ըստ այնմ այս դասը չքաջալերէ, չբարձրա-

605-40



ցընէ, չ'ազնուացնէ՝ ինք եւս բարձրանալիք չունի։  
 Որովհետեւ Պէրպլերեան վարժարանին վրայ ե-  
 կաւ խօսք, փութանք մեր մի դիտողութիւնն յայտ-  
 նել աստ որ յիշեալ մեծ հաստատութեան հսկայ  
 յառաջադիմութեան ասպնոյցն է։

Անցեալներ առիթ ունեցայ Պէրպլերեան վար-  
 ժարան յաճախող ութամեայ մանչ տղայ մը բաղ-  
 դատել մետասանամեայ աղջիկ տղու մը հետ՝ որ  
 թաղային վարժարան կը յաճախէր։ զարմանօք տեսայ  
 որ գրեթէ հաւասար կարողութեան տէր այս երկու  
 աղեկներուն սուաջինը խիստ գերազանց էր երկրոր-  
 դէն քննելու, գատելու վերաբերեալ առարկայից  
 մէջ։ Տղուն հետաքրքրութիւնը գործածուած էր  
 նորա ուշադրութիւնն մշակելու եւ ուշադրութիւնն  
 գատելու կարողութիւնը սրելու համար։ Հաշուոյ,  
 աշխարհագրութեան, ձեւերու բացատրութեան  
 մէջ մեծապէս կը գերազանցէր զմիւսն։

Ստուգիւ, այսօր Պէրպլերեան վարժարանն օվա-  
 սիս մ'է մեր ընդհանուր վարժարանաց անապա-  
 տին մէջ։

Եւ այսպիսի վարժարանի դէմ կը բանդագուշեն  
 կարգ մի ծնողք որ իրենց տղաք առջեւնին ձգած  
 քանի մը զուրուշ ի ձեռին՝ ամէն նոր բացուած  
 դպրոց կը վազեն՝ հաստատութեան տիրոջմէն ափ-  
 րայահան յարգանք, ակնածութիւն եւ ափնախոնարհ  
 հպատակութիւն ընդունելու համար. — «Ստակ  
 կուտամ»։

Գծուծ էակներ որ՝ անոր համար մարդկութեան  
 մէջ կը գտնուին՝ որպէս զի բուն մարդուն արժէքն  
 աւելի որոշ տեսնուի։

Սակայն մի վհատիք, հազուադիւս սրտեր, սի-

րահար մտաց, հանճարոյ, զոր Ֆիզիկէսի աղքատ  
 գործաւորին զաւակն բանտէն հանեց, տասութե-  
 րորդ դարու գաղիական փիլիսոփայութիւնն ար-  
 քայներու գահոյից վրայ բարձրացոյց եւ մեծին  
 Տարվինի աշակերտ տասիներորդ դարու գերմա-  
 նական փիլիսոփայութիւնն աստուածապէս փառա-  
 ւորեց յԵւրոպա. մի վհատիք, արեւելքին մէջ եւս  
 ձեր յաղթանակին օրն չէ հեռի։

ԵՂԻԱՋԱՐ ՄՈՒՐԱՏԱՆ

16 Մայիս 1880, Իսկիստ







ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

20810  
2013

«Ազգային գրադարան»



NL0056602



27

10

ԳԻՆ ՄԷԿ ԳՈՂԵԿՈՆ